**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2**
**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**
**N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ՄԱ-ԱՊՁԲ-20/2**

ք.Երևան « 25 » « 09 » 2020թ.

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությունը, ի դեմս ծառայության գլխավոր քարտուղարի պաշտոնակատար՝ Արտակ Ղազարյանի, որը գործում է ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության կանոնադրության հիման վրա, (այսուհետ «Գնորդ»), մի կողմից, և «Աջակցություն դատապարտյալին» հիմնադրամը, ի դեմս գլխավոր տնօրեն՝ Էմին Մարտիրոսյանի, (այսուհետ «Վաճառող») մյուս կողմից, փոխադարձ համաձայնությամբ, հիմք ընդունելով 27.05.2020թ. կնքված N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ՄԱ-ԱՊՁԲ-20/2 ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ «Պայմանագիր») 8.5 և 8.6 կետերը՝ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

**1. Համաձայնագրի առարկան**

1.1 Հիմք ընդունելով մատակարար կազմակերպության՝ «Աջակցություն դատապարտյալին» հիմնադրամի 24.09.2020թ. թիվ Ե-64 գրությունը, կողմերը որոշեցին՝ Պայմանագրի N1 հավելվածով՝ «տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց»-ով, նախատեսված 3-րդ եռամսյակի ընթացքում մատակարարման ենթակա բոլոր ապրանքատեսակների մատակարարման ժամկետը երկարաձգել 30 օրացուցային օրով՝ սահմանել մինչև 31.10.2020թ. :

**2. Այլ պայմաններ**

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ՄԱ-ԱՊՁԲ-20/2 ծածկագրով պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրով չնշված՝ կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքները ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից՝ հայերեն լեզվով, կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական :

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն | «Աջակցություն դատապարտյալին» հիմնադրամ |
| ք. Երևան, Արշակունյաց-63 | ք. Երևան, Վ. Սարգսյանի-3 |
| ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ, Շենգավիթի մ/ճ |
| Հ/Հ 900011175016 | Հ/Հ 163018140422 |
| ՀՎՀՀ 02204739 | ՀՎՀՀ 02560711 |
| ՔԿ ծառայություն՝<br>Ա.Ղազարյան | Գլխավոր տնօրեն՝<br>Է.Մարտիրոսյան |
| ______________ (ստորագրություն) | ______________ /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |